

մէկն էր «Նոր-Ռար» լրագրի և վերջերս նաև «Լուսայ» հանդիսի: Նորա բազմահմուտ գրիչը ուղղուած էր լատկապէս Վենետիկի Միտիթարեանց պապական հոգևով խեղաթիւրուած հայ գրականութեան դէմ:

Հանգուցեալի գրական երկերի մասին մենք կիսանք առաջիկայ համարում: Յաւիտենական հանգիստ մեղուաջան գրական գործչի ոսկրներին:

ԳՆԾԱՌ ԳԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԸ

Պ. Դրեգոր Զալխուշեանը գովելի ջանասիրութեամբ քանի տարիներից ի վեր հանգանակում էր մի գումար մեր անգուգական բանաստեղծ հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի շիրմի վերայ պատշաճաւոր մի արձան կանգնելու նպատակով: Այդ նուիրատուութեանց հաշիւը հետզհետէ տպագրուում էր հայ պարբերական թերթերում: — Այս օրերս մենք ստացանք պ. Զալխուշեանից մի նամակ, որով ծանուցանում էր թէ չիշեալ արձանը պատրաստ է արդէն և հանդիսաւոր բացումը տեղի պիտի ունենայ ամսոյս 23-ին, կիւրակի, 12 ժամին Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքում:

Խմբագրութիւնս պարտք համարեց իւր խնդակցութիւնը լայտնել այդ մասին առանձին հեռագրով:

ԱՍՏՅՈՒԱԺ ԳՐԻՔԵՐ

Սահակ Մեսրոպեան մատենադարան և. — Գիր: Էդիոց. մատենադրութիւն նախնեաց, Թիֆլիս 1901.

Վիճիւրդով. Գասագիրք ընդհանուր պատմութեան, միջին դար.